ղանոնք: Շատ քաղաքներու մէջ տուները պէսպէս գոյներով ներկուած են. սուրբերու նկարներով և ամէն տեսակ զարդերով. որոնց ձևն թէպէտ և կատարեալ չէ, բայց բնակութեանց երևոյթը կը փոփոխէ, և բարեմոյն փափագ մը կ'ընծայէ քաղաքայնոց և օտարականաց ախորժելի ըլլալու: Պալատի շքեղութիւնք և փառաւորութիւնք իր տիրոջ անձնաւորութեանը կը ծառայէ. բայց փոքր բնակութեանց խնամքով եղած զարդարանքը, տեսքը և գեղեցիկ գիւտը՝ հիւրասիրութեան գաղափար մը կու տան:

Գերմանիոյ շատ կողմերու պարտէզները դրեթէ Անգլիոյ պարտէզներուն պէս գեղեցիկ են. պարտիզաց ճոխութիւնն կը ցուցընէ որ կը սիրեն զբնութիւն: Անգլիոյ մէջ ամենապարզ տուներ՝ ամենաշքեղ պարտիզափակաց մէջ շինուած են. տանուտէրը իր բնակութիւնը անխնամ ձգելով, գեղը կը զարդարէ: Անտարակոյս այս անգլիական շքեղութեան և պարզութեան միութիւնն Գերմանիոյ մէջ այն աստիճանին չեն հասնիր. սակայն նաև քիչ հարըստութեան և պայազատական հպարտութեան տակէն կ'երևայ ամեն բանի մէջ գեղեցիկ սէր մը, որ շուտ կամ ուշ պիտի տայ ընտիր ճաշակ մը կամ շնորհք մը, վասն զի անոնց ճշմարիտ աղբիւրն է:

Շատ հեղ գերմանացի իշխանաց գեղեցիկ պարտիզափակաց մէջ, ծաղկապատ այրերու մօտ եւողեան քնարներ կու դնեն, որպէս զի հովն թէ ձայները և թէ հոտերը միատեղ տարածէ օդուն մէջ: Այս կերպով Հիւսիսոյ բնակչաց երևակայութիւնն կը ջանայ Իտալիոյ բնութիւնը ձևացընել. և շատ անգամ ամառուան գեղեցիկ աւուրց մէջ՝ մարդ կրնայ խաբուիլ:

ՏԻԿԻՆ ՏԸ ՍԴԱԷԼ:

Լոմոնտ լերան այցելութիւն մը.

Պէն-Լոմոնտի ոտքը հասած ատենս՝ արևելք կը սկսէր առաւօտեան բոլոր պայծառութեամբը փայլիլ: Լոմոնտ լիճը ոտիցս տակ ձգելով՝ զանազան կերպով լուսաւորուած լերանց երկայն գօտեաց միջէն կը բարձրանայի:

Քանի որ ուղղակի վեր կ'ելլէի, արևուն ազդեցութիւնք և հովոց ուղղութիւնք լճին վրայի միգաց բազմաթիւ ձևեր և դիրքեր կու տային, որք ամեն վայրկեան տեսարանը կը փոփոխէին: Երբեմն միայն լերանց գագաթն առաւօտեան սպիտակ շոգիներէն դուրս կ'ելնէր, և բոլոր երկիրս և երկնքին ամպոց վրայ ծփացող սև նաւու մը պէս կ'երևար: Գագլերի տարանիւթ ժայռերը կախուելով այս մառախլապատ ովկիանոսին վրայ, որ կը թրջէր իմ կըտրած անսահման միջոցիս մակերևոյթը, կը նմանէին երկու ժայռերու՝ որոնց դէմ մոլորեալ նաւերն խորտակելու մօտ ըլլան:

Վայրկեան մը ետքը ամենայն ինչ կ'երևար. լերինք մինչև իրենց խոնաւ ստորոտները կը մերկանային. ջուրերն մեղմով դէպ 'ի եղերքները կ'որորային, թաւալելով անոնց վրայ այն թափանցիկ շոգեաց թեթև ծուէնները, որ իրենց կակղութիւնը և գունով՝ ոչխարաց գզաթին և թռչնոց փետրոց կու նմանէին, և զորս Գալետոնացիք իրենց յատուկ եղած նկարչական ճշմարտութեամբը կը կոչեն լերան պիտակ վերարկուները:

Քիչ ատենէն արեգակն իր ուժը կ'առնու. միայն իր քիչ մը հորիզոնական եղող ճառագայթները կը զարնեն երկրիս՝ ուր առաջ հազիւ կը հասնէին: Ստուերներն կը քաշուին, և մառախուղք՝ կառքին անուոյն տակի թեթև փոշւոյն պէս հալածուելով, այնպիսի թեթև և փախստական կերպով կը թռչին՝ որ ամենևին մերձաւոր առարկաները չեն նսեմացըներ, և զորոնք իբր թափանցիկ շարի մը միջէն որոշակի կը տեսնես:

Միայն ատեն մը կու գայ՝ յորում աւելի հեռուն վարագոյրն կը թանձրանայ. և յետոյ առաջուան պէս ընդարձակ, խոնաւ, մթին և անթափանցելի ըլլալով՝ լերան չորս կողմը կը փակուի, և բրոնած տեղդ կը պատէ, նման այն ալեաց որ կը սպառնային մարդուն՝ լերանց յետին գագաթից վրայ, ուր դեռ չէր հասած ջրհեղեղն։

Երբ նոր ճառագայթ մը փայլել սկսի՝ վարագոյրն նորէն կը բացուի. երկինք կու լուսաւորուին, արարչութիւնն ուրիշ վիհէ մը ելլալով աչքերուդ առջև կը նորոգուի, լի մեծութեամբ և գեղեցկութեամբ. կրկին անդամ կը տեսնես լեռները, լիճը և երկինքը՝ հեռաւոր գագաթան մը վրայ կը դարձուցես նայուածքդ, ամպի մը ցնորական երևոյթը դիտելու, որ պառկած հսկայի մը և մեռնելու մօտ վիրաւոր մեծ եղնիկի մը պէս կու լուծուի կ'անցնի։ Պէն–Լոմոնտ երթալը ամենևին վտանգաւոր չէ անոնց՝ որք վտանգ բնտռելու անխոհեմութիւն չ'ունին, և անօգուտ տեղ չեն ուզեր ինկնալ անոր մէջ, նեղ գագաթին եզերքէն քալելով, ուսկից աչքը երեք կամ չորս հարիւր ոտք դահավէժ մը կու չափէ։ Մանաւանդ թէ քիչ դժարութիւններ ունի այս լեռս. աւելի դիւրացնողն ալ է գետինը ծածկող դեղնագոյն թանձր և կակուղ առաձգութեամբ մամուռ մը, որ ամենակակուղ կապերտից պէս ամենևին չինեղեր ոտքերը։ Լերան բարձրութեան երեք քառորդէն մինչև գագաթը տանող ճամբան միայն շատ սեպացեալ է։ Այս վերին մասն որ իր ձևովը և գունովը շատ հեռուէն ալ կը տեսնուի, և առաջնոյն վրայ դրուած ուրիշ լերան մը կը նմանի, 'ի կանաչութենէ բոլորովին զուրկ է...

Երբ գագաթը կը հասնի մարդ, սաստիկ ցուրտ մը կը զգայ, որ անտարակոյս յետ յոգնեցուցիչ քալուածքի մը կրնայ ըլլալ ջնասակար, եթէ չափաւոր կրթութեամբ մը շնչառութիւնը բրոնուելու զանց ըլլուի, և եթէ մարդ խնամքով օդոյ դէմ լեռնցւոց չինած անարուեստ բուրդին մէջ չպատապարուի, որ հաւանականաբար այս դիտմամբ չինուած է այն տեղը։

Երբ մարդ մէյմը ժամանակ ունենայ առաջին զարմանքէն ետքը ինքն իր վերայ գալու և զգացածը քննելու ըլլայ, բնութեան ամենէն սքանչելի տեսարաններէն մէկը վայելելու գաղափարներն կը յափշտակեն զինքը. բայց չեմ կարծեր թէ մէկն կարենայ ան ատեն աչքին առջևը պարզուած տեսարանը նկարագրել թէ խօսքով և թէ ներկով. այս մարդուս կարողութենէ վեր բան է։

Սակայն տեսնուածն ուրիշ բան չէ բայց եթէ լիճեր, կղզիներ և լեռներ՝ մեծագոյն մասամբ Պէն–Լոմոնտէն ցած, որք իր ստորոտը ոչխարաց սև հօտի մը պէս կու վխտան։ Հորիզոնին վրայ չի տեսնուիր ոչ տափարակ մը, ոչ մշակութիւն մը՝ որ մարդուս ձեռքը յայտնէ և ոչ երդիկ մը որ անոր բնակութիւնը, ներկայացընէ. և անոնք ալ զոր կըրցած էինք որոշել միջոցէ միջոց, վիապաղաղ թանձր ստուերաց պէս աներեւոյթ կ'ըլլան կամ իրենց սաստիկ պզտիկութեանը համար՝ աչաց անըմբռնելի ըլլալով կը կորսուին։

Դիւրին է ըմբռնել թէ մեր ցամաք երկրին լերանց բարձր տեղ մը հասած ճամբորդն՝ ինչ հաճութիւն կ'ունենայ դիտելով շրջավայր մը, որուն սահմանն միայն երկինքն է, և որ աչքին առջևը կը տարածէ բնութեան բոլոր հարբստութիւնները, քաղաքականութենէ զարմանալիքը, զուարճալի գեղեր, ճոխ քաղաքներ, նաւերէ ծածկուած ջրանցքներ, մշակուած բլուրներ։ Իսկ ինչ որ առանց տեսած ըլլալու մարդ չի կրնար ըմբռնել՝ ասիկայ է շքեղութիւն և մեծութիւն անապատի մը, ուր բաց'ի արարչութեան զօրութենէն ուրիշ բան մը չերևար, ուր ամենևին կարողութիւն մը կամ կամք մը Աստուծոյ կարողութեան և կամաց գործերը չէ այլափոխած. ուր իր ամեն ձեռագործքն կը պահեն տակաւին առանց փոփոխութեան՝ աշխարհքիս առաջի օրերուն մէջ ունեցած կնիքնին. ուր բան մը չէ փոխուած՝ այն օրէն 'ի վեր, յորում

Աստուած ցամաքը ջուրերէն զատեց, կղզիները լճերու մէջ զետեղեց, լճերը լերանց մէջ, լեռները ուրիշ կղզեաց մէջ, և ամբողջ երկիրս իբր ընդարձակ կղզի մը՝ Ովկիանոսի մէջ։

ԿԱ. ՄՈՏԻԷ։

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՔ

Սառը. — Ամենէն երկայն ու սաստիկ ձմեռուան մէջ սառը՝ որոշեալ ստուգութեան չափ մը կը հանի, և ասոր ներքևը քիչ մը խոր՝ ջուրը չորս աստիճան ջերմութիւն կը պահէ։ Երբ 1863ին Թամիզ գետը անանկ սառեցաւ որ վրան կառքեր կրնային քալել, Լոնտրայի արքունի ընկերութիւնը սառին հաստութիւնը չափել տուաւ, և տասնումէկ անգղիական բթաչափէ աւելի չը գտաւ, որ է 278 հաղարամեդր ոտք երկայն, տասնուվեց լայն և քսան բարձր. և դիտեցին որ նէվայէն հանած սառին հաստութիւնը՝ երեք ոտք ունէր։ Իբր 'ի պահպանութիւն այն թափանցիկ պալատան վեց հատ սառէ թնդանօթ կար և երկու ռըմբկէն իրենց կառքերովն ու անիւներովը։

Թնդանօթները սովորական թնդանօթից պէս վառօդով լեցուեցան, ու վաթսուն ոտք հեռաւորութենէ հատ տախտակի մը վրայ պարպուեցան՝ զոր կողմէ 'ի կողմ ծակեցին առանց թնդանօթները ճաթելուն։ Կը զուրցուի որ երկու բթաչափ հաստութեամբ սառը կրնայ մարդ մը վերցընել, երեք բթաչափ հաստութեամբ ձիու վրայ գինուած մէկ մը, չորս կամ հինգ բթաչափ հաստութեամբ՝ զօրաց խումբ մը կը վերցընէ, և երեսուն ոտք հաստութեամբ՝ ամբողջ բանակ մը։ 1658ին, Կարոլոս ժ Շուէտի թագաւորը Ֆանիմարքացւոց վրայ արշաւելով՝ սառած Պէլդը՝ իր բանակովը մէկտեղ անցաւ։

1795ին պատերազմի ժամանակը՝ Գաղղիացի ձիաւոր գունդերը Զուիտէրզէի վրայէն վազելով անցան, և փետրուարի 3ին՝ հուսարք և թնդանօթաձիգ ձիավարելով՝ Թէքսէլի մօտ խարիսխնետած Հոլանտայի նաւատորմիղին տիրեցին։

Ջերմի դեղը կապկոռ կերպը։ — Երկու հատ օրուան դեռ նոր հաւկիթին միայն դեղնոցը պէտք է առնուլ ու պընակի մը մէջ դնել, և ծխանոցի մուրը մանրելով դեղնոցին հետը խառնել այնչափ որ մաճունի զանգուած մը դառնայ. յետոյ ծեծած խունկ չորս գրսրմի չափ մեծ մարդու համար մէկտեղ խառնելով լաթի մը վրայ երկու մատ լայնութեամբ բազկի համեմատ հաստակէկ պէտք է քսել ու բազկի երակին վրայ պինդ կապել, անիկայ ինքնիրեն կը կպչի, և թողուլ որ ինքնիրեն խնայ։ Սակայն պէտք է ուշ դնել որ ջերմը անցնելէն ու դարձեալ չկրկնելէն առաջ դրուի, աւելի ապէկ կ'ըլլայ ջերմը անցընելէն ու բոլորովին հանգստանալէն քիչ մը վերջը կպցընելը. եթէ մէկ անգամով չանցնի, քանի մը օր վերջը նորէն պէտք է ընել։

Այս դեղս՝ դնելու ժամանակ պէտք է ընել և պէտք է որ հաւկիթը նոյն օրուանը ըլլայ։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ